ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1417 02.06.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՍՄԲ
ՄՏՄՊ № 2340
03 06 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիս ամսին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի ՃՊՎ և արձանագրվել է, որ Դիտորդական խմբի կողմից տրամադրված <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը, որտեղ ներկայացված է իրենց իրավունքների և խմբի թեժ գծի վերաբերյալ, բացակայում էր, որը նախկինում փակցված էր հերթապահ մասում՝ քաղաքացուն հասանելի տեղ: Դիտորդական խումբը գտնում է, որ դա կատարվել է միտումնավոր, որպեսզի քաղաքացին չկարողանա լիարժեք տիրապետել իր իրավունքներին և զերծ մնա Դիտորդական խմբին դիմելուց:

Դիտորդական խումբը մուտք գործելով հերթապահ մաս, այնտեղ արձանագրեց, որ հերթապահ մասում գտնվում է ՃՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկան Խաչատրյանը: Խաչատրյանի խնդրանքով Դիտորդական խումբը մուտք չգործեց ՃՊՎ և սպասեց հերթապահ մասի հերթապահ ոստիկանին: Մոտ՝ 10 րոպե անց, հանգստի սենյակից հանգնվելով դուրս եկավ և առանց Դիտորդական խմբի անձերը ճշտելու՝ անձը հաստատող փաստաթղթերը ստուգելու, ասեց, որ կարող ենք արդեն մուտք գործել ՃՊՎ:

Դիտորդական խմբի մոտ այն տպավորությունն էր, որ Խմբին 10 րոպե սպասեցնելը զուտ նպատակ էր հետապնդում, որպեսզի հերթապահ մասի հերթապահ ոստիկանը գա իր աշխատատեղը, իսկ ՃՊՎ-ի հերթապահ ոստիկանը խմբին ուղեկցի ՃՊՎ:

Մուտք գործելով ՃՊՎ, Դիտորդական խումբը նկատեց, որ ՃՊՎ-ում ձերբակալված էր պահվում, այն դեպքում, երբ ոստիկանը ՃՊՎ-ի վարչական տարածքում չէր և ՃՊՎ-ում պահվող ձերբակալվածը գտնվում էր առանց հսկողության:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./Ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՏՄՊ № 4459
«03» 06 2014թ.

Ընդհանուր ՀՊՎ-ն ուսումնասիրելուց Դիտորդական խումբը արձանագրեց, որ

1. Հայկ Ռոբերտի Խաչատրյանը ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Ջերմուկի բաժին բերման է ենթարկվել 04.02.2014թ-ին ժամը 22.30-ին և քննիչի կողմից ձերբակալվել է 05.02.2014թ-ին ժամը 01.05-ին: */փաստը հաստատող լուսանկար-1/*

Իսկ Հովհաննես Էդվարդի Ստեփանյանը ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Ջերմուկի բաժին բերման է ենթարկվել 04.02.2014թ-ին ժամը 22.50- ին և քննիչի մոտ է բերվել 05.02.2014թ-ին ժամը 05.10-ին, ձերբակալվել է 05.02.2014թ-ին ժամը 05.15-ին: */փաստը հաստատող լուսանկար-2/*: Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ Հ. Ստեփանյանը 5 ժամ 20 րոպե ապօրինի պահվելուց հետո է տարվել քննիչի մոտ:

Ցանկանում ենք ևս մեկ շեշտադրում կատարել ներկայացվածի վերաբերյալ, քննիչը տվյալ օրը և ժամը նշել է որպես արգելանքի վերցնելու պահ: Հաջորդիվ՝ 07.02.2014թ-ին ժամը 18.55-ին երկու ձերբակալվածներն էլ տեղափոխվել են ընդհանուր իրավասության դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննարկելու նպատակով, որի ժամանակ դատավորը մերժել է ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզի քննչական բաժնի քննիչ Ա. Հարությունյանի միջնորդությունները, որից հետո նշված անձիք ետ չեն բերել ՀՊՎ և ըստ քննիչի հայտարարության՝ ազատ են արձակվել, իր կողմից կազմված համապատասխան որոշումների հիման վրա */փաստը հաստատող լուսանկարներ-3,4/*

Միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել քննիչի կողմից կայացրած որոշման <<ՈՐՈՇԵՑԻ>> բաժնի 1-ին և 2-րդ կետերին՝ <<*1. Մեղադրյալ Հ.Ռ.Խ. -ին և Հ.Է.Ս.-ին ազատել արգելանքից և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել ստորագրություն չհեռանալու մասին, որի մասին հայտնել նրանց՝ ստորագրությամբ*>>: Իսկ 2-րդ կետով հանձնարարում է տվյալ գործողությունները կատարել արդեն իսկ ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի ոստիկանության բաժնին, այն դեպքում, երբ տվյալ անձանց արդեն իսկ նա ազատ է արձակել:

2. ՀՊՎ-ում պահվող ձերբակալված Մարգար Պարգևի Սարգսյանի համաձայնությունը ստանալով, Դիտորդական խումբը ուսումնասիրելով անձանական գործը, պարզեց, որ ըստ անձանական գործի նա ձերբակալվել և ՀՊՎ է ընդունվել է 15.05.2014թ-ին ժամը 15.55-ին: Բացակայում էր նրա վերաբերյալ բերման ենթարկելու արձանագրությունը, որի վերաբերյալ ՀՊՎ-ի վարչակազմը և հերթապահ մասի պետը ներկայացրին, որ նա

ինքնակամ է ներկայացել ոստիկանության բաժին: Դիտորդական խմբի անդամները առանձնազրույց ունենալով ձերբակալվածի հետ, պարզեցին, որ նրան 14.05.2014թ-ին մոտ ժամը 11.00-ին նրան բերման են ենթարկել սարից, իրեն փոխարինող հովիվ բերելուց հետո, իսկ բացատրություն վերցնելով ազատ են արձակել: 15.05.2014թ-ին ժամը 11.00-ին կրկին նրան նույն վայրից, նույն ձևով բերման են ենթարկել Եղեգնաձորի բաժին, որից հետո ձերբակալել և ընդունել են ՁՊՎ:

Երկու դեպքում էլ նշված անձին բերման ենթարկելու վերաբերյալ չկար կազմված արձանագրություն:

3. Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ ՁՊՎ-ում պահվող անձի համար նախատեսված է սննդակարգ՝ ըստ օրերի, որը իր մեջ ներառում է երեք անգամյա սնունդ՝ բանջարեղեն, ձավարեղեն կարտոֆիլ և այլն, բայց Եղեգնաձորի ՁՊՎ-ի ըստ պահանջագիր կտրոնների ձերբակալվածին տալիս են միայն հաց և պանիր, որով խախտվում է ձերբակալվածին տրամադրվող անվճար սննդով ապահովելու չափանիշները: */փաստը հաստատող լուսանկար-5/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-1591 <<03>> 07 2014թ.

Ձեր 02.06.2014թ. թիվ 2621/1417 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. մայիս ամսին ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Վայոց Ձորի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնին դիտորդների խմբի կողմից տրամադրված՝ <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը նախկինում փակցված է եղել հերթապահ մասում: Հետագայում այն տեղափոխվել և փակցվել է բաժնի միջանցքում՝ ձերբակալվածների հարազատների համար ավելի հասանելի և տեսանելի տեղում, քանի որ բաժին այցելող քաղաքացիները ոչ միշտ են մուտք գործում հերթապահ մաս:

Հարկ է նշել, որ ոստիկանությունը առավել շահագրգռված է և նպաստում է, որ բոլոր ձերբակալվածները և նրանց հարազատները լիարժեք տիրապետեն իրենց իրավունքներին, ինչի վառ ապացույցներից մեկն էլ այն է, որ ոստիկանության բաժիններում ու ՁՊՎ-ներում փակցված է դիտորդների խմբի կողմից տրամադրված՝ <<Ի գիտություն ձերբակալվածներին և հարազատներին>> պաստառը, չնայած այն որևէ իրավական ակտով նախատեսված չէ: Դիտորդների խմբի կողմից արտաբերած այն միտքը, որ նշված պաստառը հանվել է միտումնավոր որպեսզի քաղաքացին չկարողանա լիարժեք տիրապետել իր իրավունքներին և զերծ մնա դիտորդների խմբին դիմելուց՝ անհիմն է:

Դիտորդների խմբի այցելության ժամանակ ՁՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկանը գտնվել է բաժնի հերթապահ մասում բաժնի հերթապահի օգնականի խնդրանքով՝ մի քանի րոպեով նրան փոխարինելու համար և պարբերաբար հսկողություն է սահմանել ՁՊՎ-ում պահվող

ձերբակալվածի նկատմամբ, իսկ այդ պահին (ժամը 07.00-ին) ոստիկանության Եղեգնաձորի բաժնի օրվա հերթապահը օգտվել է օրենքով նախատեսված իր հանգստի ժամից և գտնվել է հանգստի սենյակում: ՁՊՎ-ի օրվա հերթապահ ոստիկանը դիտորդների խմբի այցելության մասին զեկուցել է բաժնի օրվա հերթապահին, որն էլ ներկայացել է հերթապահ մաս և ճանաչելով խմբի անդամներին անմիջապես ապահովել է վերջիններիս մուտքը ՁՊՎ:

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի հերթապահ մասի պետը ՁՊՎ-ում իրականացվող հերթապահության նկատմամբ թույլ հսկողություն սահմանելու և գործառութային պարտականությունների կատարման մեջ թերանալու համար խիստ նախազգուշացվել է:

Խախտումներ

1. Հայկ Ռոբերտի Խաչատրյանը ոստիկանության Ջերմուկի բաժին բերման է ենթարկվել 04.02.2014թ. ժամը 22.30-ին, քննիչի կողմից ձերբակալվել է 05.02.2014թ. ժամը 01.05-ին, այսինքն ոստիկանության բաժին բերվելուց 2 ժամ 35 րոպե անց:

Հայկ Խաչատրյանի հանցակից Հովհաննես Էդվարդի Ստեփանյանը ոստիկանության Ջերմուկի բաժին բերման է ենթարկվել ոչ թե 04.02.2014թ. ժամը 22.50-ին, այլ 04.02.2014թ. ժամը 22.30-ին: 05.02.2014թ. ժամը 00.45-ին վերջինս ազատ է արձակվել ոստիկանության Ջերմուկի բաժնից և միաժամանակ տեղեկացվել բնակության վայրից չհեռանալու մասին: Նույն օրը ժամը 05.10-ին Հ.Ստեփանյանը հրավիրվել է քննիչի մոտ և ժամը 05.15-ին ձերբակալվել է:

Քննիչի կողմից կազմված Հ.Ստեփանյանի ձերբակալման արձանագրությունում նշվել է բաժին բերման ենթարկելու, իր մոտ ներկայացնելու և ձերբակալման ժամերը, որտեղ նշում արված չէ Հ.Ստեփանյանին մինչև ձերբակալումն ազատ արձակելու մասին:

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման նպատակով Հ.Խաչատրյանը և Հ.Ստեփանյանը 07.02.2014թ. ժամը 18.55-ին 72 ժամը չլրացած տեղափոխվել են ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի որոշմամբ մերժվել է միջնորդությունը և քննիչի՝ անձին արգելանքից ազատելու մասին կայացրած որոշումների հիման վրա մեղադրյալները ազատվել են արգելանքից:

Արգելանքից ազատելու մասին որոշումների կատարումը հանձնարարվել է ոստիկանության Եղեգնաձորի բաժնին, սակայն Հ.Խաչատրյանը և Հ.Ստեփանյանը դատարանի որոշման հրապարակումից հետո հրաժարվել են ներկայանալ ոստիկանության բաժին: Նույն օրը վարույթն իրականացնող մարմնի կանչով վերջիններս ներկայացել են քննչական բաժին, որտեղ նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

2. Ոստիկանության Վայոց Ձորի մարզի քննչական բաժնում նյութերի նախապատրաստման շրջանակներում, բացատրություն տալու կապակցությամբ Մարգար Պարգևի Ասատրյանը (այլ ոչ Սարգսյանը) ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողների միջոցով 14.05.2014թ. ժամը 11.00-ին հրավիրվել է Եղեգնաձորի քննչական բաժին՝ քննիչի մոտ: Հաջորդ օրը 15.05.2014թ. դարձյալ քննիչի խնդրանքով Եղեգնաձորի բաժնի ծառայողների միջոցով Մ.Ասատրյանը տեղեկացվել է քննիչի մոտ ներկայանալու անհրաժեշտության մասին և իր իսկ խնդրանքով Վայոց Ձորի մարզի Չիվա գյուղից Եղեգնաձոր քաղաք՝ քննչական բաժին է մեկնել ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողի ավտոմեքենայով:

15.05.2014թ. ժամը 16.00-ին, (այլ ոչ 15.55-ին) Մ.Ասատրյանը քննիչի կողմից ձերբակալվել է և նույն օրը ժամը 16.40-ին ընդունվել է ՁՊՎ:

Մ.Ասատրյանը Չիվա գյուղի հանդամասում զբաղվել է անասնապահությամբ, որի հետ հեռախոսակապ չի եղել, ինչի պատճառով էլ նա քննչական բաժին ներկայանալու անհրաժեշտության մասին տեղեկացվել է ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողների միջոցով:

Հարկ է նշել, որ Մ.Ասատրյանին բերման ենթարկելու անհրաժեշտություն չի առաջացել, նման պահանջ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողներին չի ներկայացվել և նա

քննիչի մոտ է ներկայացել կամավոր: Ավելին բաժնի ծառայողները ցուցաբերել են մարդասիրական վերաբերմունք գյուղացիների նկատմամբ, անասունները առանց հսկողության չթողնելու համար Մ.Ասատրյանին փոխարինող անասնապահ գտնելու հարցում:

3. Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձինք ապահովվում են անվճար սննդով, անհատ ձեռներեց Գ.Ղազարյանի հետ կնքած պայմանագրի հիման վրա: Նշված ԱՁ-ն մեկ անձի համար սահմանված օրական գումարի չափով տրամադրում է սնունդ, որն իր մեջ պարունակում է սահմանված սննդատեսակները: Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ՁՊՎ-ում դիտորդների խմբին ներկայացված սննդի մատակարարման երկու (16.05.2014թ. և 17.05.2014թ.) օրվա պահանջագիր կտրոններում նշված է միայն հաց և պանիր, սակայն ստուգումների արդյունքում պարզվել է, որ ՁՊՎ-ում պահվող անձանց տրամադրվում է նաև նախատեսված սննդակարգով ուտեստներ:

ՀՀ ոստիկանության շտաբ